Հարցաթերթ

Աշխարհագրություն առարկայի դպրոցական օլիմպիադայի

առաջին (դպրոցական) փուլի – 2018թ.

/տևողությունը – 120 րոպե/

9 – րդ դասարան

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Ինչպիսի՞ աշխարհահամակարգ է ջրանցքը.
   1.բնական 2. հասարակական
   3. բնահասարակական 4. տնտեսական

2. Հյուսիսային բևեռ առաջինը հասել է.
   1. Ռ. Սքոտը 2. Ֆ. Նանսենը 3. Ռ. Ամունդսենը 4. Ռ. Պիրին

3. Հորիզոնի ո՞ր կողմում չի երևում Արեգակը.
   1. հյուսիսային 2. արևելյան
   3. արևմտյան 4. հարավային

4. Երկրի բևեռային շառավղի երկարությունը հավասար է.
   1. 6371 կմ 2. 6378 կմ 3. 6357 կմ 4. 6375 կմ

5. Ո՞ր պնդումն է ճիշտ.
   1. ջուրը դանդաղ տաքանում է և արագ սառչում:
   2. ջուրը դանդաղ տաքանում է և դանդաղ սառչում:
   3. ցամաքը դանդաղ տաքանում է և արագ սառչում:
   4. ցամաքը արագ տաքանում է և դանդաղ սառչում:

6. «Գետ – մայրցամաք » զույգերից ընտրել ճիշտը.
   1. Կոլորադո – Հարավային Ամերիկա 2. Օրանժ - Աֆրիկա
   3. Դնեպր – Հյուսիսային Ամերիկա 4. Մեկոնգ – Ավստրալիա

7. Ծալքավոր, երիտասարդ լեռնաշղթաներ են.
   1. Սկանդինավյանը և Ուրալյանը 2. Ատլասը և Ալպերը
   3. Դրակոնյանը և Ապալաչները 4. Տյան Շանը և Մեծ Ջրբաժանը

8. Կլիմայական ո՞ր գոտին է բացակայում Աֆրիկայում.
   1. հասարակածային 2. բարեխառն
   3. արևադարձային 4. մերձարևադարձային

9. «Պետություն – մայրցամաք» զույգերից ընտրել սխալը.
   1. Թուրքիա – Անկարա 2. Հունգարիա – Բելգրադ
   3. Լիտվա – Վիլնյուս 4. Էկվադոր – Կիտո

10. Ծնելիության և մահացության տարբերությունը կոչվում է.

1. բնակչության մեխանիկական աճ
2. բնակչության միգրացիա
3. բնակչության վերարտադրություն
4. բնակչության բնական աճ

11. Նյութական արտադրության ոլորտի ճյուղ է.

1. կրթությունը
2. գյուղատնտեսությունը
3. առողջապահությունը
4. մշակույթը

12. Ընտրել ճիշտ տարբերակը.

Ա. Թուրքիայում բնակչության թվով երկրորդ ազգը քրդերն են:
Բ. Թուրքիայում բնակչության գերակշիռ մասը շիա մահմեդականներ են:

1. Ա – ն և Բ – ն սխալ են
2. Ա – ն և Բ – ն ճիշտ են
3. Ա – ն ճիշտ է, Բ – ն՝ սխալ
4. Ա – ն սխալ է, Բ – ն՝ ճիշտ

13. Ո՞ր գետն են անվանում «հայոց մայր գետ».

1. Արածանին
2. Տիգրիսը
3. Ճորոխը
4. Արաքսը

14. ՀՀ տարածքում տրված ջրամբարներից ո՞րն է ամենախոշորը.

1. Ապարանի
2. Սպանդարյանի
3. Կեչուտի
4. Տոլորսի

15. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը հռչակվել է.

1. 1991 թ. հուլիսի 5 – ին
2. 1991 թ. մայիսի 9 – ին
3. 1991 թ. մայիսի 28 – ին
4. 1991 թ. սեպտեմբերի 2 – ին

Կարճ պատասխանով առաջադրանքներ

16. Գետի լայնությունը 8 մետր է, միջին խորությունը՝ 0,5 մ, իսկ ջրի արագությունը՝ 1,5 մ/վրկ: Որոշել գետի ծախսը:

17. Երկրի տարածքը 24 000 կմ² է, բնակչության թիվը՝ 4,8 մլն մարդ: Որոշել բնակչության միջին խտությունը:

18. Որոշել միևնույն միջօրեականի վրա գտնվող երկու քաղաքների միջև հեռավորությունը (կմ - ով), եթե դրանցից մեկը գտնվում է հս. լ. 5^0 - ի, իսկ մյուսը՝ հվ. լ. 3^0 – ի վրա:

19. Երկրում քաղաքաբնակների բացարձակ թիվը 24 մլն է, իսկ ամբողջ բնակչության թիվը՝ 30 մլն: Որոշել երկրի ուրբանիզացման մակարդակը:

20. Օդի բացարձակ խոնավությունը 12 գ/մ³ է, իսկ այն հագեցնելու համար անհրաժեշտ խոնավությունը՝ 30 գ/մ³ : Որոշել օդի հարաբերական խոնավությունը: